ՀՅԴ Բյուրոյի
Երիտասարդական գրասենյակ

Ամբողջական Հայաստան Արդար Հայրենիքում

100 տարի

ՍԵՎՐ

Բովանդակություն

-Մեր Խոսքը 1

-Ամփոփ ժամանակագրություն 3

-Սևրի հայանպաստ հոդվածները 14

-Նախագահ Վիլսոնի Իրավարար վճիռը 17

-Սեւրի դաշնագրի եւ Իրավարար վճռի վավերականությունը 19

-Հայոց ցեղասպանության հետեւանքները 24

-Մեր պահանջները 26

Մեր Խոսքը

2020-ը հոբելյանական է երկու փաստաթղթերի՝ Սեւրի Դաշնագիրի եւ Վիլսոնի Իրավարար վճռի համար, որոնք անկյունաքարային եւ շատ կարեւոր նշանակություն ունեն Հայոց ցեղասպանության՝ հատկապես հողային պահանջատիրության եւ հայ ժողովուրդի իրավունքի վերականգման տեսակետից:

Սեւրի դաշնագիրն այն միջազգային փաստաթուղթն է, որով Թուրքիան հաստատում է հայերի դեմ գործած իր ոճիրներն ու դրանց համար ստանձնում պատասխանատվություն:

Շնորհիվ հայության անխոնջ պայքարի՝ Ցեղասպանության միջազգային ճանաչումը հաջողություններ է արձանագրել: Սակայն, օտար պետությունների եւ նույնիսկ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը դեռ բավարար չէ: Ցեղասպանությունից 105 տարի անց՝ մեր հողային, նյութական եւ բարոյական արդար իրավունքների պահանջատիրության պայքարը տակավին մնում է իր սկզբնակետում: Ի վերջո, մեր ազգային իրավունքների և պահանջների բավարարմամբ է, որ արդարությունն ու մեր խոցված արժանապատվությունը կվերականգնվեն, եւ մեր ազգի գոյերթը կդառնա անվտանգ ու անխափան:

Այսօր ընդվզումով ենք արձանագրում, որ 100 տարի անց Սեւրի դաշնագիրն ու Վիլսոնյան իրավարար վճիռը չեն իրագործվել, ոճրագործը չի պատժվել, միջազգային ընտանիքը, քաղաքական շահերից մեկնելով, հրաժարվել է իրավարարի իր պարտականությունից, իսկ հայությունը, տակավին չտիրանալով իր արդար պահանջներին, մնում է զոհի կարգավիճակում:

Հրաժարվել մեր արդար իրավունքներից՝ կնշանակի ո՛չ միայն դավաճանել մեր միլիոնավոր զոհերին, այլեւ մշտական դարձնել հայ ժողովրդի եւ Հայաստանի Հանրապետության հանդեպ թուրքական եւ ադրբեջանական սպառնալիքները եւ տկարացնել մեր ազգի անվտանգությունը:

Սեւրի դաշնագրի նպատակն ու բովանդակությունը համարելով հայ ժողովրդի պահանջատիրության հիմքը՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության երիտասարդական շարքերը հանձնառու են այն վերածելու այժմեական հիմնախնդրի եւ հասցնելու իր հաղթական ավարտին:

2020 թվականին, ավելի քան երբեւէ, անհրաժեշտություն է հմտանալ քաղաքագիտության, պատմագիտության, ցեղասպանագիտության, միջազգային իրավունքներին վերաբերող մասնագիտական նյութերի մեջ՝ նոր թափ հաղորդելու համար Հայ դատի հետապնդման աշխատանքներին:

Այս գրքույկը՝ ՀՅԴ Բյուրոյի Երիտասարդական գրասենյակի Ուսանողական հարցերով զբաղվող հանձնախմբի աշխատությունն է՝ հիմնված տարբեր աղբյուրների ուսումնասիրությունների վրա, միտված իրազեկելու հայ երիտասարդությունը Սեւրի դաշնագրի եւ Վիլսոնի իրավարար վճռի՝ միջազգային անժամանցելի փաստաթղթերի մասին: Ծեշտենք, որ երիտասարդների կողմից բծախնդիր և երկար պրպտումների արդյունք հանդիսացող այս գործը մասնագիտական մակարդակի ուսումնասիրություն լինելու հավակնություն չունի: Հույս ունենք, որ այն օգտակար կլինի հայ երիտասարդությանը:

Հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների արդար հատուցումն ապահովող այս փաստաթղթերը այն կռվաններն են, որոնք պետք է օգտագործել մեր պահանջատիրության գործընթացի մեջ: Հավատում ենք, որ բոլոր մակարդակներում հարատեւ պայքարի ճանապարհով հայությունը ուշ կամ շուտ պետք է վերականգնի իր արդար իրավունքները:

Ամփոփ ժամանակագրություն Սեւրի դաշնագրի եւ Վիլսոնի իրավարար վճռի պատմության

Առաջին համաշխարհային պատերազմում (1914-1918 թթ.) Օսմանյան կայսրությունը՝ Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի կողքին, պատերազմեց ընդդեմ դաշնակից պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի: Պատերազմը հարմար առիթ էր թուրքերի համար՝ իրականացնելու իր պանթուրանական երբեմնի երազը: Տասնամյակներ առաջ սկսված հայ ժողովրդի դեմ հալածանքներն ու ջարդերը իրենց գագաթնակետին հասան 1915 թ.՝ Հայոց ցեղասպանությամբ:

1918 թ. մայիսի 21-29.- Հայ ժողովուրդը, կենաց-մահու հերոսական գոյամարտեր մղելով Սարդարապատում, Բաշ Ապարանում եւ Ղարաքիլիսայում, հաջողեց կասեցնել կովկասյան ճակատում թուրքական առաջխաղացումը:

1918 թ. մայիսի 28.- Անդրկովկասյան սեյմի լուծարումից հետո՝ Հայ ազգային խորհուրդը հայտարարեց Հայաստանի անկախութ-

Ֆրանսիայի Սեւր քաղաքում գտնվող պալատը, ուր ստորագրվել է դաշնագիրը

յունը՝ հռչակելով Հայաստանի Հանրապետությունը:

1918 թ. հունիսի 4.- Բաթումի դաշնագրի կնքումով Օսմանյան կայսրությանն անցան, Կարսից եւ Արդահանից բացի, Սուրմալուի, Շարուրի եւ Նախիջեւանի գավառները, ինչպես նաեւ Էջմիածնի եւ Ալեքսանդրապոլի գավառների մեծ մասը:

1918 թ. հոկտեմբերի 30.- Օսմանյան կայսրությունը, պարտվելով Առաջին համաշխարհային պատերազմում, ստորագրեց Մուդրոսի զինադադարի պայմանագիրը: Թուրքական զորքերը քաշվեցին ՀՀ տարածքից եւ Կարսի մարզից: ՀՀ Կառավարությունը չեղյալ հայտարատեց Բաթումի դաշնագիրը:

1918 թ. նոյեմբերի 11.- Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց, երբ հաջորդաբար Բուլղարիան, Ավստրո-Հունգարիան եւ Գերմանիան իրենց ճանաչեցին պարտված: Պատերազմի ավարտից հետո թուրքական զորքերը քաշվեցին Հայաստանի Հանրապետության տարածքից եւ Կարսի մարզից:

1919 թ. հունվարի 18.- Սկսվեց Փարիզի խաղաղության վեհաժողովը, որին մասնակցեցին մի կողմից հաղթող հիմնական երկրները՝ Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները եւ մի քանի տասնյակ հաղթող երկրներ, մյուս կողմից՝ պարտվող երկրները՝ հիմնականում՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Բուլղարիան եւ Օսմանյան կայսրությունը: Մասնակից եւ հաղթող երկրներից էր Հայաստանի Հանրապետությունը, որ պաշտոնապես չէր հրավիրվել վեհաժողովին: Այդուհանդերձ՝ Փարիզում գտնվող Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ եւ Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ ներկայացան դաշնակիցներին՝ առաջարկելով ճանաչել հայերի ազգային պահանջները:

1919 թ. հունվարի 28.- Վեհաժողովի Վերսալի նիստում հաստատվեց Ազգերի լիգայի կանոնադրությունը:

1919 թ. հունվարի 30.- Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած կողմի գերագույն խորհուրդը՝ կազմված Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից եւ Ճապոնիայից,

հայտարարեց, որ օսմանյան իշխանությունները չեն կատարել իրենց պարտավորությունը՝ ոչ մահմեդական հպատակներին պաշտպանելու համար, այլ՝ ընդհակառակը, կազմակերպել են այդ բնակչության զանգվածային կոտորածներ: Նրանք ընդգծում էին, որ այդ տարածքներում թուրքական իշխանությունը պետք է վերացվի եւ այնտեղ պետք է հաստատվի անկախ հայկական պետություն:

1919 թ. սեպտեմբերի 23.- Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնն իր ուղերձում նշում էր. «Հայաստանը մեկն է այն շրջաններից, որ պետք է լինի Ազգերի լիգայի խնամակալության ներքո: Հայաստանը պետք է ազատվի: Թուրքիային պետք է արգելվի այնտեղ իշխանություն ունենալ»: Վիլսոնի առաջադրած սկզբունքները ճանաչվեցին իբրեւ խաղաղության բանակցությունների հիմք:

1920 թ. հունվարի 19.- Փարիզի վեհաժողովի մասնակից հիմնական երկրները՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան եւ Իտալիան ճանաչեցին Հայաստանի անկախությունը:

1920 թ. Փետրվար.- Լոնդոնում՝ Օսմանյան կայսրության ճակատագրի որոշմանը հատկացված համաժողովում, անդրադարձ կատարվեց Հայաստանի տարածքի ճշտմանը: Քննարկման առարկա էր Օսմանյան կայսրությունից որոշ տարածքներ Հայաստանի

Սեւրի դաշնագրի ստորագրության համար օգտագործված կաղամարը

Հանրապետությանը միացնելու հարցը: Հարցի լուծման համար առաջացավ «Իրավարար վճռի» անհրաժեշտություն:

1920 թ. փետրվարի 24.- Ազգերի լիգայի հսկողության ներքո ստեղծված Հայաստանի սահմանների որոշման հանձնաժողովը՝ կազմված Ազգերի լիգայի խորհրդի չորս երկիրներից՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա եւ Ճապոնիա, հանդես եկավ զեկույց-առաջարկով եւ ներկայացրեց Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի սահմանները հստակեցնող մի ծրագիր: Կարեւորությամբ պետք է նշել, որ սույն ծրագրով Արցախը մտնում է Հայաստանի Հանրապետության կազմի մեջ:

1920 թ. ապրիլի 19-26.- Փարիզի վեհաժողովի Սան Ռիմոյի (Իտալիա) նիստում հանգամանորեն քննարկվեց Հայաստանի սահմանների ճշտման հարցը:

1920 թ. ապրիլի 23.- ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Մյուս կողմից՝ նույն թվականին Անկարայում ստեղծվեց Թուրքիայի Մեծ ժողովը՝ Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ:

Դաշնակից երկրների քառյակը



1920 թ. ապրիլի 26.- Սան Ռիմոյի նիստում Դաշնակից երկրների գերագույն խորհուրդը՝ բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի ներկայացուցիչներից, նամակով դիմեց Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնին՝ երկու խնդրանքով. Առաջին՝ որպեսզի ԱՄՆ-ն ստանձնի Հայաստանի Հանրապետության հոգատարությունը (մանդատ, mandate): Երկրորդ՝ որպեսզի նախագահ Վիլսոնը հանդես գա իբրեւ իրավարար՝ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ վերջնական սահմանի ճշտման հարցում: Դաշնագրի՝ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող մասում որոշվեց արձանագրել, որ Թուրքիան, Հայաստանը եւ պայմանավորվող մյուս կողմերը համաձայն են դիմելու Միացյալ Նահանգների նախագահի իրավարարությանը՝ Թուրքիայի եւ Հայաստանի սահմանների ճշտման համար եւ ընդունում են այդ հարցով նրա որոշումը, ինչպես նաեւ որեւէ պայման, որ նա կառաջարկի՝ Հայաստանին դեպի ծով ելք ապահովելու համար: Նախագահ Վիլսոնին ներկայացված իրավարարության դիմումը հետագայում ամրագրվեց Սեւրի դաշնագրի 89-րդ հոդվածի տեսքով:

1920 թ. մայիսի 11.- Սեւրի դաշնագրի նախօրինակը Դաշնակից ուժերի ներկայացուցչությունը հանձնեց թուրքական պատվիրակությանը:

1920 թ. մայիսի 17.- ԱՄՆ-ի նախագահը հայ-թուրքական սահմանը ճշտելու հարցով որպես իրավարար հանդես գալու առաջարկին պաշտոնական համաձայնություն տվեց:

1920 թ. հունիսի 1.- ԱՄՆ-ի Ծերակույտը (Senate) ձայների 52 դեմ, 23 կողմ հարաբերակցությամբ հրաժարվեց Հայաստանի հոգատարությունը (mandate) ստանձնելուց: Ծերակույտի համոզմամբ հոգատարության ստանձնումը ենթադրում էր բազմահազար զորքի տեղակայում այդ տարածաշրջանում եւ հսկայական գումարների տրամադրում: Ավելին՝ Ծերակույտը մերժել էր Վերսալի դաշնագիրը, հետեւաբար մերժել էր նաև Ազգերի լիգայի կանոնադրությունը, ԱՄՆ-ը չէր կարող ստանձնել հոգատարությունը, որ իր սկզբունքով պետք է հիմնվեր Ազգերի լիգայի կանոնադրության վրա:

1920 թ. հունիս.- Հայաստան-Թուրքիա սահմանի վերաբերյալ իրավարար վճիռ պատրաստելու համար ստեղծվեց

մասնագիտական ուսումնասիրություններեի հանձնաժողով՝ ԱՄՆ-ի Պետքարտուղարության եւ նախագահի վարչակազմի մասնակցությամբ: Այս հանձնաժողովը գլխավորեց Վիսկոնսինի համալսարան դասախոս Վիլյամ Վեսթրմենը՝ աջակից ունենալով Լորնս Մարտինին եւ Հարիսն Տվայտին: Հանձնաժողովը, չորս ամսվա ընթացքում հարցաթերթիկներ բաժանելով, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կամ նախօրեին Օսմանյան կայսրության մեջ գործ ունեցողների (ամերիկյան միսիոներներ, առեւտրականներ եւ ամերիկացի պաշտոնյաներ) վերաբերյալ առավելագույն տվյալներ հավաքեց: Սեւրի դաշնագրի ստորագրությունից հետո այս հանձնախումբը շարունակեց իր աշխատանքը:

1920 թ. հուլիսի 17.- Որպես պատասխան Սեւրի դաշնագրի նախօրինակի դեմ թուրքական բողոքների՝ դաշնակից ուժերի

Թուրքական պատվիրակությունը ստորագրում է Սեւրի դաշնագիրը

ներկայացուցիչները հայտարարեցին, որ Հայաստանի անկախության եւ Օսմանյան կայսրության որոշ տարածքներ Հայաստանին միացնելու հարցերում որեւէ փոփոխություն չի կարող կատարվել: Հստակ արձանագրվում է, որ իրավարարության գործընթացն այլեւս անդառնալի է եւ պետք է շարունակվի: Զուգահեռաբար քննարկվեցին նախօրինակի վերաբերյալ թուրքական առարկությունները, եւ, ի վերջո, մասնակի փոփոխություններով պատրաստվեց դաշնագրի վերջնական տարբերակը, որը նույն օրը Թուրքիայի պատվիրակությանը հանձնվեց:

1920 թ. օգոստոսի 10.- Ստորագրվեց Սեւրի (Փարիզի արվարձաններից մեկը) դաշնագիրը՝ Օսմանյան կայսրության (սուլթանական կառավարության) եւ դաշնակից պետությունների միջեւ: Հայաստանի Հանրապետության կողմից դաշնագիրը ստորագրեց Ավետիս Ահարոնյանը: Սակայն հետագայում Անկարայի քեմալական կառավարությունը չհաստատեց կնքված դաշնագիրը:

1920 թ. օգոստոսի 25.- Կնքվեց ռուս-թուրքական առաջին գաղտնի պայմանագիրը Լենինի եւ Քեմալի միջեւ:

1920 թ. սեպտեմբերի 23.- 30 հազարանոց քեմալական բանակը հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա՝ գրավելով Սարիղամիշը եւ Կաղզվանը:

1920 թ. սեպտեմբերի 28.- Սեւրի դաշնագրի ստորագրումից շուրջ մեկուկես ամիս անց՝ իրավարար վճռի հանձնաժողովը՝ ԱՄՆ-ի

Սեւրի դաշնագիրը ստորագրած Ավետիս Ահարոնյանի գրիչը



պետքարտուղարությանը հանձնեց իր ամբողջական զեկույցը, որը հիմք ծառայեց նախագահ Վիլսոնի Իրավարար վճռի համար:

1920 թ. հոկտեմբերի 30.- Բոլշեւիկյան քարոզչության արագընթաց տարածման եւ համատարած դասալքության պատճառով՝ հայկական բանակը մեծամասամբ կազմալուծվեց: Այս դժվարին պայմանների մեջ Կարսը հանձնվեց թուրքական բանակին:

1920 թ. նոյեմբերի 22.- ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը ստորագրեց Իրավարար վճիռը, որը մտավ ուժի մեջ: Այս փաստաթուղթը ստորագրել է նաեւ պետքարտուղար Պենպրիճ Կոլպին: Փաստաթուղթը կնքվքած է ԱՄՆ-ի Մեծ կնիքով՝ կարմիր ժապավեններով կապված: Նշենք, որ Մեծ կնիքը ամենաբարձր իրավական կարգավիճակն է հաղորդում յուրաքանչյուր փաստաթղթի՝ նախագահի եւ պետքարտուղարի ստորագրությունների հետ միասին: Այսպես՝ ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ կա մի հոդված, ըստ որի՝ նախագահի ստորագրությունը կրող որեւէ փաստաթուղթ դառնում է երկրի ներքին օրենք (law of the land): ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի Իրավարար վճռի բնօրինակներից մեկը այժմ պահվում է ամերիկյան Ազգային արխիվներում (National Records and Archives):

1920 թ. նոյեմբերի 24.- Իրավարար վճռի էական բաժինը հեռագրով փոխանցվեց Փարիզում ԱՄՆ-ի դեսպան Վալասին՝ հանձնարարելով այն հանձնել Խաղաղության խորհրդաժողովի քարտուղարությանը, որպեսզի նա էլ՝ իր հերթին, փոխանցեր դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդին:

1920 թ. դեկտեմբերի 2.- Թուրքական եւ բոլշեւիկյան սվինների միջեւ հայտնված Հայաստանի Հանրապետությունը հարկադրաբար տեղի տվեց՝ կորցնելով ընդարձակ տարածքներ եւ ի վերջո խորհրդայնացավ:

1920 թ. դեկտեմբերի 6.- Բրիտանացիները, շնորհակալություն հայտնելով ԱՄՆ-ի նախագահին, առաջարկեցին չհրապարակել վճիռը, որովհետեւ Հայաստանի խորհրդայնացումն այդ վճիռը անիմաստ կդարձներ:

1920 թ. դեկտեմբերի 6.- Դեսպան Վալասը՝ մի նամակով, Խաղաղության խորհրդաժողովի քարտուղարությանը փոխանցեց

Իրավարար վճիռը: Այն Դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին հանձնվեց Հայաստանի խորհրդայնացումից չորս օր անց:

1920 թ. դեկտեմբերի 7.- Դեսպան Վալասը նույն թվականին մի նամակով հաստատեց վճռի հանձնումը Խաղաղության խորհրդաժողովի քարտուղարությանը:

1920 թ. դեկտեմբերի 17.- Վիլսոնը, հավատարիմ մնալով իրավարարի բարձր կարգավիճակին եւ հակառակ իր առողջական ծանր վիճակին, 10 օր բանակցելուց հետո, տեղի չտալով քաղաքական ճնշումներին եւ հակառակ Հայաստանի խորհրդայնացմանը՝ հրապարակեց Իրավարար վճիռը, որը ուժի մեջ մտավ իրավական տեսակետից:

Սրահը, ուր ստորագրվել է դաշնագիրը

Հայաստանի անկախության հռչակում

28 Մայիս

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը

11 Նոյեմբեր

1918

1919

Մուդրոսի պայմանագրի ստորագրումով Թուրքիան ընդունում է իր պարտությունը դաշնակից ուժերի կողմից

30 Հոկտեմբեր

Փարիզի խաղաղության վեհաժողովի սկիզբը

18 Յունուար



Սան Ռիմոյում դիմում ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին

26 Ապրիլ



Ստորագրվում է Սեւրի դաշնագիրը

10 Օգոստոս



Հրապարակվում է Վիլսոնի Իրավարար վճիռը

17 Դեկտեմբեր

1920



ԱՄՆ-ի նախագահը համաձայնում է ստանձնել Հայաստան-Թուրքիա սահմանագծումի իրավարարությունը

17 Մայիս

Վուդրո Վիլսոնը ստորագրում է Իրավարար վճիռը

22 Նոյեմբեր

Հայաստանին եւ հայության վերաբերող Սեւրի դաշնագրի հոդվածները

Սեւրի դաշնագիրն ստորագրվեց 1920 թ. օգոստոսի 10-ին՝ Ֆրանսիայի Սեւր քաղաքում, հաղթական Դաշնակից ուժերի եւ պարտված Թուրքիայի միջեւ:

Ստորագրող կողմերն էին՝ մի կողմից՝ Բրիտանական կայսրությունը (Միացյալ Թագավորություն, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա, Հնդկաստան), Ֆրանսիան, Իտալիան եւ Ճապոնիան՝ որպես գլխավոր դաշնակից պետություններ, եւ այս պետությունների դաշնակից Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Հեջազը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբերի, խորվաթների եւ սլովենների թագավորությունը եւ Չեխոսլովակիան, իսկ մյուս կողմից՝ Թուրքիան: Դաշնագրի ստորագրման նպատակն էր՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Դաշնակից ուժերի եւ Թուրքիայի միջեւ խաղաղություն հաստատելու պայմանների ճշտումը:

Թուրքիայի հետ խաղաղություն հաստատելու համար՝ այլ պայմանների շարքում, Սեւրի դաշնագիրով Թուրքիան պատասխանատվություն էր կրում 1914 թ. ի վեր հայերի դեմ գործած ոճիրների համար եւ հատուցման պարտավորություն

Սեւրի դաշնագրի ստորագրում

ստանձնում նյութական այն կորուստների համար, որ պատմության այդ ժամանակահատվածում ունեցել էին Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող հայերը:

88-րդ հոդվածով Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը՝ իբրեւ ազատ եւ անկախ պետություն, ինչպես իրենից առաջ ճանաչել էին Դաշնակից պետությունները:

89-րդ հոդվածով Թուրքիան եւ Հայաստանը, ինչպես նաեւ պայմանագրի մյուս կողմերը, համաձայնության են գալիս ԱՄՆ-ի նախագահի իրավարարությանը հանձնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի նահանգներում Թուրքիայի եւ Հայաստանի սահմանների որոշման խնդիրը եւ ընդունել նախագահի որոշումով Հայաստանին դեպի ծով ելք տալու եւ վերոհիշյալ սահմանին հարակից Օսմանյան բոլոր հողերի ապառազմականացման որոշումները:

90-րդ հոդվածը նախատեսում էր, որ եթե 89-րդ հոդվածի տրամադրության համաձայն ճշտված սահմանով վերոհիշյալ նահանգների հողատարածքի մի մասը կամ ամբողջությունը փոխանցվի Հայաստանին, Թուրքիան՝ որոշման թվականից, կհրաժարվի այդ հողատարածքների նկատմամբ իր իրավունքներից:

Սեւրի դաշնագիրի մեջ կա երեք այլ հոդված, որոնք կարեւոր են Ցեղասպանությունն իրագործած պետության համար պատասխանատվություն սահմանելու առումով: Սրանք թիվ 226, 228 եւ 230 հոդվածներն են, որոք Սեւրի պայմագրի «պատժամիջոցներ» բաժնից են:

226-րդ հոդվածով մասնավորապես նշվում է, որ թուրքական իշխանություններն ընդունում են հաղթած տերությունների իրավունքը՝ պատասխանատվության ենթարկելու այն թուրք պաշտոնյաներին, որոնք պատերազմական հանցանքներ են գործել պատերազմի ընթացքում, եւ առաջին իսկ պահանջով պետք է նրանց հանձնեն հաղթած պետությունների արդարադատությանը՝ անկախ այն բանից, թե թուրքական արդարադատության կողմից նրանք պատասխանատվության կանչվել են, թե՝ ոչ:

228-րդ հոդվածի մեջ նշվում է, որ թուրքական իշխանությունները պետք է անհրաժեշտ փաստաթղթեր փոխանցեն՝ հանցագործների

պատասխանատվությունը ճիշտ գնահատելու եւ համապատասխան պատիժներ սահմանելու համար:

230-րդ հոդվածում նշվում է, որ թուրքական իշխանությունները պետք է հաղթած տերություններին հանձնեն այն հանցագործներին, որոնք մեղսակից են մինչեւ Համաշխարհային պատերազմի սկիզբը թուրքական իշխանության տակ գտնվող խաղաղ հայ բնակչության զանգվածային կոտորածներ կազմակերպելու մեջ:

Թիվ 144 հոդվածով հայերի կրած նյութական իրավունքների վերականգման հստակ ձեւաչափեր են սահմանվում: Այստեղ արձանագրված է, որ «լքյալ գույքի» մասին օրենքը պետք է չեղյալ համարվի: Հայերի «լքյալ» ունեցվածքը, որ թուրքական կառավարության համապատասխան հրամանագրով բռնագրավված էր, պետք է վերադարձվեր իր իրավատիրոջը: Ավելին՝ պիտի ստեղծվեին խառն իրավարար հանձնաժողովներ՝ ներառելով մեկական ներկայացուցիչ թուրքական կառավարությունից եւ տուժող համայնքից: Հանձնաժողովների նախագահներ պետք է լինեին Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակված անձինք: Հանձնաժողովը պետք է վճռեր, թե գույքը ու՞մ է պատկանում, եւ եթե բռնագրավված էր, պետք է վերադարձվեր տիրոջը: Այս հանձնաժողովների ընդունած որոշումները անբեկանելի էին եւ չէին կարող վերանայվել թուրքական որեւէ դատարանի կամ կառավարական օղակի կողմից:

Դաշնակից երկրների ներկայացուցիչները պալատի մուտքի մոտ

ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոն

Նախագահ Վիլսոնի Իրավարար վճիռը

Նախագահ Վիլսոնի իրավարար վճիռը ներկայացվեց 1920 թ. նոյեմբերի 22 - ին:

Իրավարար վճռի պաշտոնական անվանումն է՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելքի եւ հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»:

Իրավարար վճիռի հիմնական որոշումները հետեւյալներն են.

1- Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում են Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգների՝ ընդհանուր առմամբ 103,599 քառ. կիլոմետրի վրա: Իրավարար վճռով ավելցված տարածքներում հայ բնակչության թիվը կազմում էր 52%: Համաձայն Վիլսոնի պատկերացումների՝ 20-25 տարում հայերի թիվը հասնելու էր մինչեւ 70%-ի՝ հիմնականում ներգաղթի շնորհիվ, նաեւ մահմեդական բնակչության կամավոր եւ բանակցված արտագաղթի հետեւանքով:

2- Տրապիզոնի նավահանգիստն ու Քարշուտ գետի հովիտը Հայաստանի սահմանների մեջ ներառնելով՝ վճռվում էր նաեւ դեպի ծով ելքի հարցը: Բացի Տրապիզոնի նավահանգստից՝ իրավարարությամբ Հայաստանին տրվում էր 4 այլ ազատ նավահանգիստներ հիմնելու իրավունք՝ Էգեյան ու Միջերկրական ծովերի ափերին, Կոստանդինապոլսում եւ Բաթումում: Ավելին՝ երկաթուղին, որ

պիտի անցներ Հայաստանի տարածքով, պետք է լիներ Հայաստանի սեփականությունը:

3- Հայաստան-Թուրքիա սահմանների ապառազմականացման հարցը լուծելու միտումով՝ այդ սահմաններում գտնվող զորքի գերագույն հրամանատարներ պիտի նշանակվեին Դաշնակից ուժերի կամ չեզոք երկրների զինուժից ընտրված աստիճանավոր զինվորականներ: Այսպես՝ Իրավարար վճռով նախատեսվում էր Հայաստանի Հանրապետության տարածքին (որ մոտ 57,000 քառ. կմ. էր) ավելցնել Վանի, Էրզրումի եւ Բիթլիսի նահանգների մեծագույն մասը եւ Տրապիզոն նահանգի 1/3ը՝ Տրապիզոնի նավահանգստով (ընդհանուր՝ մոտ 103,000 քառ. կմ.): Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը պիտի ունենար մոտ 160,000 քառ. կմ. տարածք:


TRAITÉ DE PAIX

ENTRE

LES PUISSANCES ALLIÉES ET ASSOCIÉES

ET LA TURQUIE

SIGNÉ

LE 10 AOÛT 1920

À SÈVRES.

(TEXTE FRANÇAIS, ANGLAIS ET ITALIEN.)

Սեւրի դաշնագրի փաստաթղթի կազմը

Սեւրի դաշնագիրի եւ Վիլսոնի Իրավարար վճիռի վավերականության հարցը

Սեւրի դաշնագիրը

Սեւրի դաշնագրի վերջաբանում արձանագրված է, որ դաշնագիրը՝ պատրաստված ֆրանսերեն, անգլերեն եւ իտալերեն լեզուներով, պետք է վավերացվի: Պետք է պատրաստվի վավերացման հաստատագրերի հանձնման արձանագրությունը, երբ այն հաստատվի մի կողմից՝ Թուրքիայի, մյուս կողմից՝ երեք հիմնական Դաշնակից պետությունների կողմից: Նաեւ նշված է, որ առաջին արձանագրության թվականից սկսյալ, դաշնագիրը ուժի մեջ է մտնում պայմանադիր բարձր կողմերի համար, որոնք հաստատել են այն:

Թուրքիան, ստորագրությունից հետո չհաստատելով Սեւրի դաշնագիրը, Խաղաղության խորհրդաժողովի քարտուղարությանը չի հանձնել Դաշնագրի վերջաբանի մեջ նախատեսված հաստատագիրը: Այս հանգամանքը տեղիք է տալիս տիրող այն առարկությանը, թե Դաշնագիրը ուժի մեջ չի մտել:

Սակայն Սեւրի դաշնագիրը, հակառակ այն վիճարկելի իրողությանը, թե կատարողական ուժ չի ունեցել, իր վավերականությունը չի կորցրել: Սեւրի դաշնագիրը համարվում է վավերական փաստաթուղթ հետեւյալ փաստարկներով.

- Դաշնագիրը ստորագրված է առնչակից կողմերի լիազորված եւ իրավասու ներկայացուցիչների կողմից:

- Թուրքիայի գահակալ Սոլթան Մուհամմեդ Դ-ին վստահված էր դաշնագրեր ստորագրելու իրավունքը: Նկատի ունենալով, որ այդ օրերին խորհրդարանը լուծարված էր, Թուրքիան պաշտոնապես չտեղեկացրեց դաշնագիրը ստորագրող մյուս պետություններին, որ իր խորհրդարանը չպիտի վավերացնի Սեւրի դաշնագիրը: Սուլթանը Շորայե Սալթանաթի (Թագավորական խորհուրդ) հատուկ նիստ հրավիրեց (այս խորհուրդը այդ ժամանակ Թուրքիայում գործող միակ քաղաքական կառույցն էր) եւ դաշնագրի վերջնական տարբերակի ստորագրման մասին որոշում կայացրեց: Այսպես՝ Թուրքիայի կողմից

դաշնագիրը ստորագրվեց Թուրքիայի նշանակած պատվիրակության կողմից:

- Սեւրի դաշնագիրը, ստորագրման պահից վավերական լինելով, զերծ չէ իրավական ուժից մինչեւ այն պահը, երբ կողմերից որեւէ մեկը պաշտոնապես չի հայտնել այն չվավերացնելու մասին: Ստորագրող կողմերից ո՛չ մեկը (ներառյալ Թուրքիան) չի վիճարկել դաշնագրի վավերականության հարցը:

- Թուրքիայի պնդումը, թե Լոզանի դաշնագիրը փոխարինում է Սեւրի դաշնագրին, ոչ միայն իրավականորեն առարկելի է, այլեւ նշանակում է, որ առնվազն մինչեւ Լոզանի դաշնագիրի ստորագրությունը Սեւրի դաշնագիրը հանդիսացել է վավերական իրավական փաստաթուղթ:

- Թուրքիան, հիմնվելով Լոզանի դաշնագիրի վրա, պնդում է, թե այն փոխարինում է Սեւրի դաշնագրին: Սակայն Լոզանի դաշնագիրը պաշտոնապես անվավեր չի հայտարարել Սեւրի դաշնագիրը: Հատկանշական է նաեւ, որ Հայաստանին առնչվող որեւէ հարցի կապակցությամբ ոչ մի հստակ տնօրինություն չկա այդ դաշնագրում:

- Անկախ այն բանից, թե որքան է անհրաժեշտ ստորագրությունից հետո դաշնագրի վավերացումը, Թուրքիան երբեւիցե պաշտոնապես չի հայտարարել, որ ինքը չի վավերացնելու Սեւրի դաշնագիրը:

- Սեւրի դաշնագրի վավերականության հարցը պետք է քննարկել նաեւ միջազգային իրավունքի տեսանկյունից: Վավերականության պայմանները լրացրած եւ ստորագրված որեւէ պայմանագիր անգամ հարկադիր կատարողական ուժ ստանալու պայմանների լրացումից առաջ զերծ չէ իրավական ուժից:

Վիլսոնի Իրավարար վճիռը

Իրավարարությունը (arbitration), որպես վեճերի լուծման այլընտրանքային տարբերակ, օգտագործվում է թե՛ ներպետական վեճերի լուծման, թե՛ հատկապես միջազգային բնույթ ունեցող մասնավոր վեճերի լուծման դեպքում՝ որպես հարմարագույն տարբերակ:

Հաագայի 1907 թվականի համաժողովից (Hague Convention, 1907) բխած միջազգային պայմանագրերը՝ միջազգային նախադեպային իրավունքի (Common Law) ոլորտում արտահայտիչն են մի շարք այնպիսի կանոնների, որոնք համընդհանուր ճանաչում եւ ընդունելություն են գտել վեճերը իրավարարությամբ լուծելու հարցում:

Վիլսոնի Իրավարար վճռի վավերականության հարցը քննելու ժամանակ պետք է կարեւորությամբ նշել, որ այն բավարարում է այս պայմանագրերից «միջազգային վեճերի խաղաղ կարգավորման պայմանագրի» մեջ տեղ գտած իրավարարության մասին զանազան պայմանները:

Ընդհանուր առմամբ Վիլսոնի Իրավարար վճիռը կարելի է ամրագրել որպես վավերական փաստաթուղթ հետեւյալ փաստարկներով.

- Համաձայն Հաագայի վերոհիշյալ պայմանագրի՝ իրավարարություն հնարավոր է միայն այն ժամանակ, երբ տվյալ վեճի կողմերը համաձայվում են վեճը լուծել իրավարարությամբ: Այս դեպքում հակադիր երկու կողմերը՝ Սեւրի դաշնագիրը ստորագրած Հայաստանն ու Թուրքիան, համաձայնվել են իրենց սահմանային վեճը լուծել Իրավարար վճռով:

- Դարձյալ համաձայն Հաագայի վերոյիշյալ պայմանագրի՝ իրավարարները պետք է լինեն անկախ ու անկողմնակալ եւ չպետք է ենթարկված լինեն անպատշաճ արտաքին ազդեցության, ինչպես, օրինակ, կաշառքը կամ փտածությունը: Նշենք, որ Վիլսոնը ներկայացնող երկիրը՝ ԱՄՆ-ը, թեեւ պատերազմի ընթացքում

մշտական դիվանագիտական հարաբերություններ ուներ Օսմանյան կայսրության, իսկ հետագայում՝ քեմալականների հետ, այդուհանդերձ այս առումով որեւէ շահախնդրության տեղիք չէր տալիս: Նախագահ Վիլսոնն արդեն նախապես հանդես էր եկել իր նշանավոր 14 կետերով եւ Օսմանյան կայսրության բաժանման թեզն էր առաջ քշել, հետեւաբար քաջատեղյակ էր խնդիրին: Առավել եւս, որ նա իրավաբան եւ փաստաբան էր, ուներ միջազգային հեղինակություն:

• Հաագայի նշյալ պայմանագիրը շեշտում է, որ իրավարարության համար փաստարկների ներկայացումը պետք է զերծ լինի կեղծիքից եւ չպիտի պարունակի հիմնական սխալներ: Այս հարցով եւս դժվար է կասկածել, որովհետեւ Վիլսոնը Իրավարար վճռի կայացման համար գործի լծեց մասնագիտական հանձնաժողով՝ կազմված միջազգային ճանաչում եւ հեղինակություն վայելող անձերից:

• Հաագայի վերոյիշյալ պայմանագրի համաձայն՝ իրավարարը չպետք է գերազանցած լինի իր իրավասության սահմանները: Սեւրի դաշնագրով նախագահ Վիլսոնի ունեցած իրավասությունները, որոնք որպես իրավարար ինքն իրավունք չուներ գերազանցելու, սահմանված էին ըստ հետեւյալի՝

1. Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի նահանգներում ճշտել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանները:

2. Լուծել Հայաստանի՝ դեպի ծով ելք ունենալու հարցը:

3. Տնօրինել վերոհիշյալ սահմանին հարակից Օսմանյան բոլոր հողերի ապառազմականացման հարցը:

Նախագահ Վիլսոնն իր վճիռը հստակորեն կայացրել է նշված հարցերի սահմաններում:

• Հաագայի վերոհիշյալ պայմանագրի հոդվածներից մեկում նշվում է, որ պատշաճ կերպով կողմերի ներկայացուցիչներին ծանուցված Իրավարար վճիռը վերջնականորեն եւ առանց վերաքննության իրավունքի լուծում է վեճը:

• Իրավարար վճիռը հաստատման կարիք չունի: Այն ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

• Սեւրի Դաշնագրի 89-րդ հոդվածում վերահաստատվում է Իրավարար վճիռը, որի գործընթացն արդեն իսկ սկսվել էր:

• Նույնիսկ Միացյալ Նահանգների հոգատարությունից հրաժարումով՝ իրավարարությունը կանգ չառավ:

• Իրավարարության ոլորտի մեջ ընդունված սկզբունք է, որ պայմանագրի մեջ ներառված իրավարարության մասին հոդվածը պետք է դիտարկվի որպես առանձին պայմանագիր, որը գործում է անկախ այն պայմանագրից, որի մեջ ներառված է այն:

• Լոզանի դաշնագիրը չի արժեզրկում նախագահ Վիլսոնի Իրավարար վճիռը:

• Նախագահ Վիլսոնի վճիռը հրապարակվել է այն ժամանակ, երբ Սեւրի դաշնագիրը իրավականորեն վավերական փաստաթուղթ էր:

• Թուրքիան երբեք չի առարկել նախագահ Վիլսոնի իրավարար վճռի դեմ:

Հայոց Ցեղասպանության հետեւանքները

2015 թվականի հունվարի 29-ին՝ Ծիծեռնակաբերդի բարձունքից հնչեց համահայկական հռչակագիրը: Այդ հռչակագրով հայությունը՝ ի լուր աշխարհի հայտարարեց, որ այսուհետ ինքը պիտի պայքարի ո՛չ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, այլեւ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգման համար: Այսպիսով՝ տրվեց Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման գործընթացի մեկնարկը:

Թուրքիայի Հանրապետությունը, որպես Օսմանյան կայսրության ժառանգորդ, պարտավոր է հայերին տալ համապարփակ հատուցումներ:

Հայոց ցեղասպանության հետեւանքները ծանր ու անդառնալի են, որոնցից գլխավորը **հայրենազրկումն** է. Հայոց ցեղասպանությամբ արեւմտահայությունից բռնագրավվեց նրա բնօրրանը:

Երկրորդ հետեւանքը՝ 1,5 միլիոն **մարդկային կյանքի կորուստն** է: Եթե ցեղասպանություն տեղի չունենար, այսօր հայության թիվը կլիներ ավելի քան 20 միլիոն:

Երրորդ հետեւանքը՝ հայության **նյութական** հսկայական կորուստն է: Ցեղասպանության ընթացքում տեղի ունեցավ հայերի ունեցվածքի զանգվածային բռնագրավում: Տեղահանության օրենքից հետո թուրքական պետությունն ընդունեց օրենք «լքյալ գույքի» մասին, որով տեղահանվածների գույքը համարեց լքյալ, հետեւաբար՝ այն համարվեց պետության սեփականությունը: Այսպիսով՝ թալանը օրի-նակացվեց:

Չորրորդ հետեւանքը՝ **մշակութային ժառանգության կորուստն** է: Հայկական քաղաքակրթական ժառանգությունը ոչնչացնելու կամ յուրացնելու քաղաքականությունը տակավին շարունակվում է:

Հինգերորդը՝ ցեղասպանության թողած հոգեբանական հետեւանքն է, որը հաջորդ սերունդների վրա ծանր ազդեցություն ունեցավ: Ցեղասպանությունից հետո հայ ժողովուրդը տասնամյակներ շարունակ ապրեց ցեղասպանվածի բարդույթով. զարգացման մըղումի փոխարեն՝ ավելի շատ գոյատեւման հոգեվիճակով ապրեց:

Հայաստան-Թուրքիա սահմանը՝ Վիլսոնի սահմանագծումով

Մեր պահանջները

Ինչ՞ է պահանջում այսօր հայությունը Թուրքիայից՝ իր իրավունքների վերականգման համար: Փոխհատուցման պատկերացում:

Ճանաչում

Թուրքական կառավարությունը պաշտոնական հայտարարությամբ պետք է ընդունի Հայոց ցեղասպանության փաստը: Ճանաչումով պետք է վերջ տրվի ժխտողականության քաղաքականությանը:

Ներողության հայցում

Թուրքական կառավարությունը թուրք ժողովուրդի անունից պետք է հայերից պաշտոնապես ներողություն խնդրի Ցեղասպանության եւ հետագայում նրա ժխտման համար:

Կրթում եւ հիշատակում

Թուրքական կառավարությունը հիշատակման եւ կրթական նախաձեռնություններով պետք է թուրք ժողովրդին իրազեկ դարձնի Հայոց ցեղասպանության մասին: Պետք է նախաձեռնի Թուրքիայի առողջացման գործընթաց՝ պետական հաստատություններից, իրավական համակարգից եւ թուրքական մշակույթից ջնջելով Ցեղասպանության հետեւանք հանդիսացող վերաբերմունքը, օրենքները եւ հատկանիշները: Առողջացումն անհրաժեշտ է, որպեսզի հայերը, Հայաստանում՝ թե այլուր, այլեւս չենթարկվեն սպառնալիքի:

Գույքի վերադարձ, գույքի, մահվան ու տառապանքի փոխհատուցում

Ցեղասպանության ընթացքում բռնագրավվեցին հողեր, շինություններ, գույք, հաստատություններ, տնտեսական կառույց-

ներ եւ ձեռնարկություններ, որոնք պետք է վերադարձվեն, եթե դրանք տակավին ոչնչացած չեն, իսկ եթե ոչնչացված են, դրանց դիմաց պետք է տրվի փոխհատուցում:

Նյութական փոխհատուցման գումարի մեջ պետք է ներառվեն ունեցվածքի գնի աճը եւ տոկոսները, ինչպես նաեւ սպասվելիք ֆինանսական եւ այլ օգուտները:

Պետք է փոխհատուցվեն նաեւ ստիպողական աշխատանքն ու նյութական բռնագրավումները:

Փոխհատուցում պետք է տրվի նաեւ որպես Ցեղասպանության հետևանք տեղի ունեցած մահվան, ֆիզիկական եւ հոգեկան տառապանքների եւ ընտանիքի ամբողջական կամ մասնակի ոչնչացման դիմաց:

Մահվան ու տառապանքների դիմաց տրվող դրամական փոխհատուցման նպատակը ներկա պատիժի միջոցով անցյալում հասցված վնասի չեզոքացումն է:

Հողային Պահանջ

Վիլսոնի Իրավարար վճիռը միջազգային իրավունքի հիմամբ անժամկետ է, անբեկանելի եւ կատարման համար պարտադիր: Վիլսոնյան սահմաններով Հայաստանն իր սեւծովյան ելքով կապահովի հայկական պետության կենսունակությունը եւ այդ հողերի վրա հայ ինքնության վերակերտման կարիքները:



Turkish-Armenian boundary

Other international boundaries

Unmarked international boundaries

Old Turkish-Russian boundary

Vilayet boundaries

Sanjak boundaries

Kaza boundaries

Railways, broad gauge

ERZERUM ..... *Names of the vilayets of Erzerum, Trebizond, Van, Bitlis and other administrative units*

Map compiled under the direction of Major Lawrence Martin, General Staff, U. S. Army, by the topographic branch U. S. Geological Survey, in cooperation with the Department of State, from field observations by the Harbord Mission and from maps of the Turkish General Staff, scale 1:200,000, German maps prepared during the war, scale 1:400,000, and British maps of Persian and Transcaucasian territory, scale 1:1,000,000

Woodrow Wilson